Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ

_____ Ն. Խ. Սարիբեկյան

«03» _____ 2020թ.

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ավանդական բժշկության համալսարանի աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների էթիկայի կանոնակարգը (այսուհետ՝ Կանոնակարգ) նորմատիվ իրավական ակտ է, որը սահմանում է բարոյաէթիկական սկզբունքները, կանոնները, նորմերը, վարքագծի կանոնները և գործնական հարաբերությունները ԱԲՀ-ում:

1.2. Կանոնակարգը ներդրվում է ԱԲՀ-ում գործունեություն իրականացնող աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների բարոյահոգեբանական, գիտամանկավարժական, դաստիարակչական և կազմակերպական հիմունքների զարգացման և ամրապնդման նպատակով, որը նպաստում է ԱԲՀ-ի ընդհանուր գործունեության և զարգացման հիմնական ծրագրերի աջակցությանն ու իրականացմանը:

1.3. Կանոնակարգով սահմանված պահանջները տարածվում են բոլոր աշխատողների վրա՝ անկախ զբաղեցրած պաշտոնից:

II. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Համալսարանի աշխատակիցները պարտավոր են պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.

- հարգել ՀՀ պետական լեզուն,ինչպես նաև պետական խորհրդանիշները,
- Համալսարանի մյուս աշխատողների (այսուհետ Գործընկերների) հետ փոխհարաբերություններում լինել հարգալից, շրջահայաց, արդարամիտ, պահպանել ենթակարգությունը,
- իր գործողություններով կամ անգործությամբ չվարկաբեկել Համալսարանի հեղինակությունը,
- հարգել գործընկերների մասնագիտական կարծիքը,
- չքննադատել գործընկերներին այլոց ներկայությամբ. խնդրի առաջացման դեպքում պարզաբանումներ մտցնել՝ վերջինիս ներկայությամբ,

- չտարածել աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ դրանք օգտագործելու միջոցով,
- աշխատավայրում չծխել,
- բարեխղճորեն վերաբերել գործատուի և գործընկերների գույքին,
- պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ:

2. Համալսարանի աշխատակիցներին արգելվում է՝

- առանց գործատուի համաձայնության աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարումը գործընկերոջը վերահանձնարարելը,
- Համալսարանին սեփականության իրավունքով պատկանող գույքը փչացնելը կամ կորցնելը,
- գործընկերների նկատմամբ խտրականության դրսևորումը անկախ՝ սեռից, տարիքից, ազգային էթնիկական կամ սոցիալական ծագումից, ռասայից, կրոնական դավանանքից կամ առողջական վիճակից և այլն,
- Համալսարանի զարգացման ծրագրով սահմանված ուսումնադաստիարակչական գործընթացների ներդրմանը և կատարմանը խոչընդոտելը:

3. ԱԲՀ-ի ակադեմիական աշխատակազմի վարքագծի կանոնները ներառում են.

- վարքագիծը, այդ թվում՝ կարգապահությունը և կարգապահական տույժերը,
- աշխատանքի նշանակումը, առաջխաղացումը և աշխատանքից ազատումը,
- գիտական հետազոտությունները, քննություններն ու գնահատականները:

4. ԱԲՀ-ի ուսանողների վարքագծի կանոնները ներառում են.

- վարքագիծը, այդ թվում՝ կարգապահությունը և կարգապահական տույժերը,
- ակադեմիական բարեվարքությունը:

5. Ընդհանուր սկզբունքները ձևավորվել են ՀՀ օրենսդրության պահանջների, Բարձրագույն կրթության ոլորտում ինստիտուցիոնալ էթիկայի կանոնագրքի ուղեցույցի, Եվրոպական հանձնաժողովի Հետազոտողների եվրոպական խարտիայի և հետազոտողների հավաքագրման վարքագծի կանոնագրքի դրույթների հիման վրա: